**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի կանոնակարգի 10 հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությունում, այն է՝ «Սահմանադրության 100 հոդվածի 3.1. (բացառությամբ մեծամասնական ընտրակարգով պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերի վերաբերյալ հարցերի), 4-րդ եւ 6-րդ կետերում նշված հարցերով ներկայացված դիմումների նախնական ուսումնասիրումը պետք է ավարտվի ոչ ուշ, քան դիմումի գրանցումից 24 ժամ հետո», «դիմումի գրանցումից» բառերը փոխարինել «դիմումի նախնական ուսումնասիրումը սահմանադրական դատարանի նախագահի կողմից սահմանադրական դատարանի անդամին (անդամներին) հանձնարարելուց» բառերով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**
**ՆԱԽԱԳԱՀ** **Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

21 մայիսի 2007 թվականի
ՍԴԱՈ -64